ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ---------- 2019թ. **N_____ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 16.08.2019թ. հ. 01/11.1/9697-19, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության 02.05.2019թ. հ.31-244 և 06.08.2019թ. հ.31-497 գրությունները և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան համայնքի սեփականությունը համարվող 37.247.000 (երեսունյոթ միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ մնացորդային արժեքով Երևան քաղաքի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի գեղարվեստական լուսավորության համակարգը նվիրել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հայաստանի հեռուսատատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի 308մ. բարձրությամբ հեռուստաաշտարակի գեղարվեստական լուսավորության համակարգը տեղադրվել է Երևանի քաղաքապետարանի կողմից 2011 թվականին և հաշվառված է Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում: Տեղադրումից հետո համակարգը փաստացի չի սպասարկվել և ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում:

Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության, վճարում է միայն ծախսած էլեկտրաէներգիայի համար:

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հայաստանի հեռուսատատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունը պատրաստակամություն է հայտնել իրականացնելու լուսավորության համակարգի վերականգման և արդիականացման համապատասխան աշխատանքները, ինչպես նաև իր վրա վերցնել հետագա շահագործումը, պայմանով, որ Երևանի քաղաքապետարանը հեռուստաաշտարակի գեղարվեստական լուսավորության համակարգն անհատույց հանձնի ընկերության հաշվեկշիռ:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու որոշմամբ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Երևանի քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին

«Երևանի քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Երևանի քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.

«Երևանի քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու
2019թ._____
h. _____որոշման

ՑԱՆԿ

նվեր հանձնվող գույքի

Հ/Հ	Անվանումը	Հզորություն /ՎՏ/	Քանակը	Լուսավորված օբյեկտ
1	JRF2-36-RGB/15	36	120	Երևանի հեռուստաշտարակ
2	JRF2-36-RGB/30	36	173	
3	PROJECTOR STAR CT WB	400	3	
4	PROJECTOR STAR CT NB	400	3	
5	HRI-BT 400W/D/230/E40	400	6	
6	JRL1-36-RGB	36	24	
7	LED հոսանքի փոխակերպիչ JRL1-36-RGB Dirver	-	5	
8	DMX կարգավորիչ JRM 16KB-N	-	1	
9	DMX կարգավորիչ JR-SVE4X512	-	12	
10	Ազդանշանի ուժեղացուցիչ JRW-FDQ-001	-	18	
11	Հոսանքի փոխակերպիչ LPV-20-24	-	18	